ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ ԳԱԳԻԿԻ

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

ԺԲ.00.02 Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АМАЛЯ ГАГИКОВНА САФАРЯН

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ РЕАЛИЗАЦИИ КОНСТИТУЦИОННЫХ ОСНОВ СВОБОДЫ СОБРАНИЙ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – Публичное право: конституционное, право; административное право; финансовое право; муниципальное право; экологическое право; европейское право; государственное управление.

ЕРЕВАН-2024

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գևորգ Բալաբեկի Դանիելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ **Ռուզաննա Խաչիկի Հակոբյան**
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Սայադ Սուքիասի Բադալյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հոկտեմբերի 4-ին ժ. 14^{30}-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի սեպտեմբերի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор **Даниелян Геворг Балабекович**

Официальные оппоненты: доктор юрид. наук, доцент **Акопян Рузанна Хачиковна**
кандидат юрид. наук, доцент **Бадалян Сайад Сукиасович**

Ведущая организация: **Исктитут Философии, социологии и права НАН РА**

Защита состоится 4 октября 2024 года в 14^{30} часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 3 сентября 2024 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Իրավական պետության առանցքային արժեքներից է խաղաղ հավաքների ազատության ճանաչումը և պաշտպանությունը: Հավաքների ազատության իրավունքի պաշտպանությունն անխուսափելիորեն էական նշանակություն է ձեռք բերում հատկապես այն երկրներում, որտեղ ժողովրդավարության կայացման հարցում առկա են լրջագույն խնդիրներ և միտված է ոչ միայն երաշխավորելու ժողովրդավարության արդյունքները, այլև հանդես գալու որպես ժողովրդավարության կայացման ու զարգացման կարևոր նախադրյալ:

Ինչ վերաբերում է հավաքների ազատության իրավունքի իրացմանը, ապա այն կարող է պայմանավորված լինել երկրում ժողովրդավարական սկզբունքների կենսունակությամբ, քաղաքական ավանդույթների պահպանմամբ, քաղաքական համակարգի նորմատիվային ու գաղափարական տարրերի որակական հատկանիշների համընկնման առաջնահերթությամբ և, իհարկե, անձի քաղաքական ակտիվությամբ: Այս համատեքստում, ելակետային է ազատական իրավամտածողության կայացման ու դրա հասարակական ընկալման և ընդգրկման աստիճանը:

Հավաքների ազատությունն անմիջական առնչություն ունի հանրային իշխանության հետ, այն «ուղղված է հանրային իշխանության դեմ», ուստի այդ ազատության նկատմամբ վերաբերմունքը կարող է ընկալվել որպես նույն ազատության նկատմամբ պետության վերաբերմունքի հիմնարար չափանիշ՝ հատկապես, հանդուրժողականության աստիճանը գնահատելու տեսանկյունից:

Հանրային իշխանության խոցելիությունը «բացահատող» իրավունքներն ու ազատություններն իրենց երաշխավորման աստիճանով կարող են դիտարկվել որպես յուրահատուկ ցուցիչ՝ ժողովրդավարության վիճակը համարժեք գնահատելու, ինչպես նաև պետության ողջ ներքին քաղաքականության լեգիտիմությունը պարզելու տեսանկյունից: Միաժամանակ հակված չենք այն մտայնությանը, որ անվերապահ հանդուրժողականությունը պետք է դիտարկել իբրև հանրային իշխանության իրավաչափ գործունեություն: Այս հարցում ցանկացած ծայրահեղ մոտեցում կարող է հանգեցնել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, ինչպես նաև հան-

րային շահերի խոցելությանը: Հանրային իշխանությունը պարտավոր է ցուցաբերել բացառապես համաչափ վերաբերմունք, որպեսզի մի կողմից հավասարապես երաշխավորվեն բոլոր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք այս կամ այն կերպ «անհանգստություն» են պատճառում հանրային իշխանությանը, մյուս կողմից՝ դրանց նկատմամբ հանդուրժողականությունը չպետք է հանգեցնի այլոց իրավունքների ոտնահարմանը և Սահմանադրությամբ պաշտպանվող մյուս հանրային արժեքների անտեսմանը:

Հավաքների ազատությունը շահեկան է հանրային իշխանության համար նաև այն տեսանկյունից, որ այն հնարավորություն է տալիս առավել համարժեք բացահայտելու մարդկանց իրավագիտակցությունը և քաղաքական դիրքորոշումները, ներքին և արտաքին քաղաքականության առանցքային հարցադրումների նկատմամբ հանրության մոտեցումները: Խնդիրն այն է, որ այս հարցում պետությունը, մեր կարծիքով, ունի երկակի գործառույթ, մասնավորապես, պետությունը մի կողմից օբյեկտիվորեն ձգտում է հանրության մեջ ձևավորել իր տեսանկյունից ընդունելի ակնկալիքներ, մյուս կողմից՝ ծավալել այնպիսի գործունեություն, որի արդյունքում կբավարարվեն այդ ակնկալիքները: Այս համատեքստում հանրային իշխանությունը կարիք ունի հստակ պարզելու, թե իր կողմից «թելադրվող» ակնկալիքները որքանով են արմատացել հանրության շրջանում, ինչպես նաև այն, թե որքանով է այդ ակնկալիքների ապահովման ուղղությամբ պետության քաղաքականությունը գնահատվում բավարար:

Իհարկե, վերը նշված հարցադրումների պատասխանները կարելի է ստանալ սոցիոլոգիական հարցումների միջոցով, սակայն որքան էլ այդ գործիքը համապատասխանի արհեստավարժության բարձր աստիճանի, միևնույն է, հավաքների ազատությունը հնարավորություն է տալիս առավել համարժեք և խորքային պատկերացում ունենալու նույն այդ հարցադրումների առնչությամբ հանրության տրամադրությունների վերաբերյալ: Չպետք է անտեսել նաև այն, որ մարդկանց իրավագիտակցության ձևավորման միակ աղբյուրը բնավ պետության քաղաքականությունը չէ, այն գտնվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բազում ազդակների ներքո, ինչը ևս ընդգծում է հավաքների ազատության նկատմամբ հնարավորինս համարժեք քաղաքականություն մշակելու անհրաժեշտությունը:

Ներկայացված գիտագործնական խնդիրների հետազոտումն ու լուծումը հնարավոր է, եթե քաղաքացիական հասարակությունում հավաքների ազատությունը ընկալվի որպես յուրօրինակ հաղորդակցության միջոց՝ հանրային իշխանության մարմինների և քաղաքացիների միջև, հնարավորություն ընձեռելով, որպեսզի հանրությանը և հանրային իշխանության մարմիններին ներկայացվի գաղափարների, կարծիքների և առաջարկությունների ողջ հանրագումարը՝ իր բոլոր երանգներով հանդերձ:

Թեև նշված հիմնախնդիրներն որոշ չափով արտացոլվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններում, այնուամենայնիվ, հավաքների ազատության ինստիտուտի համակողմանի ուսումնասիրությունը, համարժեք տեսական մշակումների պակասն անհրաժեշտություն են առաջացնում՝ այն համալիր ուղղություններով բարեփոխելու առումով: Հավաքների ազատության իրավունքի իրացման հիմնախնդրի հետազոտումը ներկայումս կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների համատեքստում հավաքների ազատության վերաբերյալ օրենսդրությունը կատարելագործելու տեսանկյունից: Ինչպես իրավակիրառ պրակտիկայի, այնպես էլ իրավաստեղծ գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավատեսական համալիր մոտեցումների բացակայության պայմաններում հնարավոր չի լինում ապահովելու հավաքների ազատության իրացման միասնական և կանխատեսելի լուծումներ, և այդ առումով առավել անհանգստացնող է խիստ իրարամերժ մոտեցումների հանգամանքը: Նշված փաստարկները ևս պայմանավորում են հետազոտվող թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է «հավաք» եզրույթի սահմանման ճշգրտումը և հստակեցումը, հավաքի առանձին տեսակների առանձնահատկությունների վերհանումը, հավաքների ազատության իրավունքի իրացման մեխանիզմի կատարելագործումը, առաջավոր փորձի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանափակման նպատակահարմարության պարզաբանումը, հավաքներին մասնակցելու, դրանք կազմակերպելու հիմնախնդիրների հետազոտումը և դրանց հիման վրա օ-

ռենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակումը: Այդ նպատակին համապատասխան՝ առաջ են քաշվել հետազոտության հետևյալ խնդիրները՝

- իրականացնել հավաքների ազատության էության, սոցիալական նշանակության և տեսակների վերլուծություն,
- հետազոտել հավաքների ազատության իրավունքի իրացման սահմանադրաիրավական հիմնախնդիրները,
- հետազոտել իրավական մշակույթը հավաքների ազատության իրավունքի համատեքստում,
- ներկայացնել համալիր լուծումներ՝ Հայաստանի Հանրապետությունում հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն է հանդիսանում հավաքների ազատությունը՝ որպես ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման ու զարգացման կարևորագույն ինստիտուտ: Հետազոտության առարկան են հավաքի հասկացությունը, նշանակությունը, տեսակները, հավաքների ազատության իրավունքի իրացման կառուցակարգը, հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանափակումը և հավաքների ազատության իրավունքի իրացման իրավական մշակույթը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Հայաստանի Հանրապետությունում հավաքների ազատության ինստիտուտի հիմնարար ուղղություններին անդրադարձել են Գ. Բ. Դանիելյանը, Ա. Ա. Ջագարյանը և ուրիշները: Հավաքների ազատության իրավունքի իրացման հիմնահարցերը հետազոտված են արտերկրների գիտնականների աշխատություններում, մասնավորապես՝ Ա. Ռայխերի, Մ. Ա. Յակովենկոյի, Ս. Ա. Վլադիմիրովիչի, Ա. Ե. Վաշկևիչի, Ի. Ա. Դեմիդեվայի, Ա. Շայոյի, Ս. Մոսկովիչի, Մ. Ն. Մարչենկոնի, Մ. Զաքսի, Վ. Հեփելի, Ռ. Ալեքսիսի, Տ. Ա. Ալեքսեյովայի, Գ. Լեբոնի, Հ. Թրեթերի, Տ. Մ. Խրամովայի, Ռ. Ա. Բույանտուևայի և այլոց:

Հետազոտության տեսական հիմքն են հանդիսացել հայրենական և արտասահմանյան իրավագետներ Գ. Գ. Հարությունյանի, Վ. Ս. Ներսեսյանցի,

Գ. Բ. Դանիելյանի, Ա. Ա. Մանասյանի, Վ. Ն. Այվազյանի, Ա. Ա. Ջագարյանի, Ռ. Ռ. Մարանդյանի, Մ. Հ. Մուրադյանի, Կ. Հեսսեի, Կ. Ա. Իվանովայի և այլոց աշխատությունները: Հետազոտության մեջ օգտագործվել են նաև քաղաքագիտության, փիլիսոփայության, լեզվաբանության և սոցիոլոգիայի ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան մի շարք երկրների (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Շվեյցարիայի Համադաշնություն, Ֆրանսիայի Հանրապետություն և այլն) սահմանադրությունները, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքները, «Հավաքների ազատության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Դատախազության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Քննչական կոմիտեի մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները և այլն: Աշխատանքում օգտագործվել են նաև քննարկվող հիմնախնդիրներին վերաբերող բազմաթիվ միջազգային և եվրոպական կառույցների իրավական ակտեր, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռները և այլ ակտեր:

Հետազոտության փորձառական հիմքն են հանդիսանում 2021 թվականին սոցիալական հարցման արդյունքում ձեռք բերած տվյալները, ինչպես նաև՝ աշխարհի տարբեր երկրներում հավաքների անցկացման հաճախա-

կանության և հավաքի մասնակիցների կողմից դրանց մասնակցության վերաբերյալ տեղեկությունների վերլուծությունը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել ձևական-տրամաբանական, համակարգակառուցվածքային, պատմահիրավական և համեմատական մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ գիտական նյութերի և օրենսդրության հիման վրա իրականացվել է հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման համակողմանի հետազոտություն և առաջադրվել են միանգամայն նոր մոտեցումներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Հավաքները, ըստ էության, ունեն ոչ միայն զուտ ինքնուրույն սահմանադրական իրավունքի արժեք, այլև կրում են ժողովրդաիշխանության բաղադրիչի հատկանիշներ, քանի որ դրանց միջոցով, այս կամ այն չափով, ձևավորվում է հանրային ակնկալվող քաղաքական կամքը, ինչը ժողովրդաիշխանության դե ֆակտո իրականացման համատեքստում ունի վճռորոշ դեր: Այսպիսով, խաղաղ հավաքներն ունեն երկակի նշանակություն՝ անմիջականորեն դրսևորվելով իբրև քաղաքական իրավունք և միաժամանակ, որպես ժողովրդաիշխանության երաշխիք: Խաղաղ հավաքները, ըստ էության ոչ միայն քաղաքական կամքի ձևավորման, այլև արդեն իսկ ձևավորված քաղաքական կամքի խորքային բացահայտման, դրա համակիրների շրջանակի առավել հստակ ուրվագծման, և, ըստ այդմ էլ՝ հանրային իշխանության վրա ներգործելու օրինաչափ գործիք է:

2. Հանրային հավաքի անցկացման մասին իրազեկման քննարկումների ընթացքում ոստիկանության և ազգային անվտանգության մարմինները չպետք է սահմանափակվեն միայն իրազեկման մեջ արտացոլված հնարավոր վտանգների կամ առնվազն խոչընդոտների շրջանակով, այլ հավուր պատշաճի բացահայտեն դրանց իրական շրջանակները և պարտավոր լինեն ողջամտության սահմաններում հրապարակայնացնելու բացասական դիրքորոշման իրենց հիմնավորումները: Այդպիսի վերապահումը հնարավո-

ություն կտա տեղական ինքնակառավարման մարմիններին կայացնելու առավել հիմնավորված և անաչառ որոշումներ:

3. Ինքնաբուխ հավաքների ներքին բովանդակությունը հարկ է արմատապես վերանայել՝ բացառելով որոշ կազմակերպչական բաղադրիչների (որոնց առնչությամբ անդրադարձ կա ատենախոսությունում) առկայության պարագայում հավաքը որպես այլևս ինքնաբուխ չդիտարկելու դիրքորոշումը: Ըստ էության ցանկացած, այդ թվում՝ ինքնաբուխ հավաքի պարագայում հնարավոր են որոշ, սահմանափակ կազմակերպչական քայլեր, որոնք, սակայն, ոչ թե վկայում են հավաքի կազմակերպչական լինելու, այլև հավաքի իրականացումը նվազագույն չափով կազմակերպված անցկացնելու իրավաչափ մտադրության մասին: Տվյալ դեպքում առանցքայինը ոչ այնքան կազմակերպչական բաղադրիչներն են, որքան որևէ սոցիալ-քաղաքական երևույթին արձագանքելու եղանակը:

4. Խաղաղ հավաքների բնականոնությունը ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում հավուր պատշաճի և հնարավորինս սեղմ ժամկետում քննության իրականացում, որի ընթացքում հավաքը ոչ թե դադարեցվի, այլ կասեցվի՝ մինչև վերջնական որոշումը: Հավաքները կարող են դադարեցվել միայն անհաղթահարելի ուժի առկայության դեպքում, ինչը ևս պետք է հստակ արձանագրվի:

5. Հավաքի կազմակերպման և անցկացման փուլերում (իրազեկումը, հավաքի սկիզբը և ավարտը, ընդհուպ՝ հավաքը դադարեցնելը) առանձնակի կարևորվում է հավաքի կազմակերպչի (ղեկավար) դերակատարությունը: Հավաքների ընթացքում հավասարակշռված որոշումներ կայացնելու նկատառումներից ելնելով՝ առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել հավաքի կազմակերպչի պատասխանատվության որոշակիացմանը վերաբերող դրույթ՝ բացառելով կազմակերպչի պատասխանատվությունը հավաքի մասնակից հանդիսացող անձանց կամ սադրիչների արարքների համար: Այն կարող է հնարավորություն ընձեռնել կատարելագործելու հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման որակը, քանի որ վերջինիս նպատակը ոչ միայն հասարակական հարաբերությունների սուբյեկտների շահերի ներդաշնակեցումն է, այլև բախումային իրավիճակների կանխումը կամ դրանց արդյունավետ լուծումը:

6. Հավաքների ազատության իրավունքի արդյունավետության ապահովման տեսանկյունից նպատակահարմար է քաղաքական չեզոքության ցուցաբերման և առանց համազգեստի հավաքների մասնակցելու հետ կապված իրավական անորոշության խնդիրը լուծել համարժեք ու համալիր իրավական կարգավորումների միջոցով՝ երաշխավորելով հանրային ծառայության սահմանափակումների և անձի քաղաքական իրավունքների խելամիտ ներդաշնակեցման հիմնախնդիրը:

7. Հավաքներին մասնակցելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներն անհամատեղելի են քննարկվող ոլորտում տվյալ իրավունքի տեսահիրավական արդի խորքային վերլուծություններով բացահայտված մոտեցումներին: Հարկ է ելակետ ընդունել, որ հավաքների ազատության իրավունքը՝ Սահմանադրության 39-րդ հոդվածի համատեքստում վերլուծելուն զուգահեռ, որոշակիորեն առնչվում է իրավունքների մրցակցության սկզբունքի հետ, որպիսի պարագայում հավաքների ազատության իրավունքն ունի գերակայող նշանակություն: Ըստ այդմ էլ՝ առաջարկվում է մարդու այլ իրավունքների պաշտպանության նպատակով հավաքների ազատության սահմանափակումը քննարկել միայն այն դեպքում, երբ այդ նպատակին հասնելը, ինքնին, համաչափության սկզբունքին համապատասխան բավարար է հիմնավորելու պետության միջամտությունը: Այն չի կարող օգտագործվել որպես կամայական կամ անորոշ սահմանափակումներ կիրառելու հիմք, քանզի այդ կերպ խաթարվում է իրավունքների մրցակցության սկզբունքը: Ընդհանրապես այլոց իրավունքների պաշտպանության ողջ քաղաքականությունը հարկ է կառուցել ոչ միայն համաչափության և այլ սահմանադրական սկզբունքների երաշխավորման, այլև իրավունքների մրցակցության չափանիշների հետևողական պահպանմամբ:

8. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի հեռանկարային զարգացումը հաջորդիվ շրջափուլերում կարող է հստակ արտահայտվել միայն այն դեպքում, երբ իրական ճանաչվեն պետության և քաղաքացիական հասարակության քաղաքակիրթ փոխազդեցությունը: Ուստի, խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման խնդիրը լուծելու համար նպատակամետ ենք համարում իրավական մշակույթի զարգացման

առանցքային դերակատարության դիտարկումը հանրային հավաքներ անցկացնելու քաղաքական իրավունքի իրացման մեխանիզմում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հավաքների ազատության վերաբերյալ հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել հավաքների ազատության վերաբերյալ օրենսդրության կատարելագործման, գիտական և ուսումնական գրականության նախապատրաստման նպատակներով, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք», «Համեմատական սահմանադրական իրավունք», «Մարդու իրավունքները և ոստիկանությունը» ուսումնական դասընթացների դասավանդման ընթացքում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի և Հայաստանի Հանրապետության ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոններում: Հետազոտության հիմնական դրույթները և եզրահանգումները արտացոլվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, ներդրված են Հայաստանի Հանրապետության ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի ուսումնական գործընթացում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ամփոփված յոթը պարագրաֆներից, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը,

հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Հավաքների ազատության էությունը, սոցիալական, իրավաքաղաքական նշանակությունը և տեսակները» խորագրով առաջին** գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

«Հավաքների ազատության տեսաիրավական հիմքերը» վերտառությամբ 1.1 պարագրաֆում ուսումնասիրվել են հավաքի՝ որպես սահմանադրաիրավական ինստիտուտի բնորոշումները, վերլուծության են ենթարկվել հավաքի անցկացման վայրի, ժամանակի և նպատակի ողջամիտ հարաբերակցության հարցերը, ինչպես նաև առանձին ղեկավար սկզբունքների ամրագրման առաջնահերությունը, ներկայացվել են համապատասխան օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

«Հավաքների սոցիալական և իրավաքաղաքական նշանակությունը» վերտառությամբ 1.2 պարագրաֆում անդրադարձ է կատարվել հավաքների ազատության սոցիալական էությանը, հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ կարծիքն ազատորեն արտահայտելու ձևերին, հավաքի անցկացման մասին բացասական դիրքորոշումներ ներկայացնելու դեպքում պատկան մարմինների հիմնավորումները ողջամտության սահմաններում հրապարակայնացնելու անհրաժեշտությանը, ինչպես նաև հավաքի իրազեկման ժամկետի ամրագրմանը և ներկայացվել են համապատասխան եզրահանգումներ:

«Հավաքների առանձին տեսակների անհրաժեշտությունը և դրանց իրավական հիմքերը» 1.3 պարագրաֆում ներկայացվել են հավաքների տեսակները, ուսումնասիրվել են ինքնաբուխ, հակադարձ ուղղվածության հավաքների հատկանիշները և հիմնավորվել է, որ ինքնաբուխ հավաքի դեպքում առանցքայինը սոցիալ-քաղաքական երևույթին արձագանքելու եղանակն է, իսկ հակադարձ ուղղվածության հավաքի դեպքում՝ հանրային իշխանության մարմինների կողմից հակընդդեմ խմբերի դիրքորոշման խաղաղ արտահայտման հնարավորության ապահովումը:

Երկրորդ գլուխը՝ «Հավաքների ազատության իրավունքի իրացման սահմանադրաիրավական հիմնախնդիրները» խորագրով, բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հավաքների ազատության իրավունքի իրացման կառուցակարգը» վերտառությամբ 2.1 պարագրաֆում ուսումնասիրվել է պետության դերակատարությունը խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման կառուցակարգում, առաջարկվել է օրենսդրությամբ ամրագրել հավաքների ազատության կարգավորման վերաբերյալ որոշումներ կայացնող պատասխանատու մարմնի իրավական կարգավիճակը և գործառույթների հստակ սահմանումը:

Միաժամանակ, խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման խնդիրը լուծելու համար անդրադարձ է կատարվել հավաքի կազմակերպչի պատասխանատվությունը որոշակիացնող դրույթ ձևակերպելու առաջարկությանը, վտանգի կամ հնարավոր անկարգությունների դեպքում հավաքի կասեցման առաջնահերթությանը և միայն անհաղթահարելի ուժի առկայության դեպքում հավաքի դադարեցման արձանագրմանը:

«Հավաքների ազատության իրավունքի սահմանափակման հիմքերը և սահմանները» վերտառությամբ 2.2 պարագրաֆում որոշակիության և համաչափության սկզբունքների համատեքստում ուսումնասիրվել են հավաքների ազատության իրավունքի սահմանափակման, ինչպես նաև իրավապահ մարմինների գործունեության ընթացքում իրավական արժեքների նախապատվության հարցը լուծելիս մրցակցության մեջ գտնվող իրավունքների իրացման, հավաքներին մասնակցելիս իրավապահ և այլ ռազմականացված մարմինների ծառայողների կողմից քաղաքական չեզոքության ու զսպվածության ցուցաբերման հիմնախնդիրները և առաջարկվել է կատարել օրենսդրական փոփոխություններ:

Երրորդ գլուխը՝ «Իրավական մշակույթը հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման համատեքստում» խորագրով, բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հավաքների ազատության իրավունքի իրացման իրավական մշակույթը» վերտառությամբ 3.1 պարագրաֆում անդրադարձ է կատարվել գործող օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի առնչությամբ բնակչության հուզական վերաբերմունքի ազդեցությանը իրավական մշակույթի զարգացման և հավաքների ազատության իրավունքի իրացման

արդյունավետության վրա: Իրավական մշակույթը դիտարկվել է մարդ պետություն հարաբերությունների շարունակական կատարելագործման երաշխիք: Առաջարկվել է ձեռնպահ մնալ ատելության խոսքի գործածումից՝ հավաքի մասնակիցների, լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների և հավաքի բնականոն ընթացքն ապահովող իրավապահ մարմինների՝ միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու առաջնահերթությամբ պայմանավորված :

«Ոստիկանության դերը հավաքների ազատության իրավունքի ապահովման գործընթացում» վերտառությամբ 3.2 պարագրաֆում ուսումնասիրվել են հանրային հավաքներ անցկացնելու ժամանակ ամբոխի հոգեբանության առանձնահատկությունները, ոստիկանության իրավական գործելակերպի և կադրերի մասնագիտական, հոգեբանական ու դեոնտոլոգիական պատրաստվածության հիմնահարցերը, անդրադարձ է կատարվել երկխոսության հայեցակարգի զարգացմանը և հիմնավորվել է բանակցային ոստիկանության ստեղծելու անհրաժեշտությունը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Խաղաղ հավաքների ազատության իրավունքը ժողովրդաիշխանության անքակտելի բաղադրիչներից է և կոչված է իրավական հնարավորություն ընձեռելու քաղաքացիներին, որպեսզի վերջիններս անմիջականորեն ներգրավված լինեն պետական կառավարման գործընթացին՝ ազատ, հրապարակայնորեն հայտնելով իրենց տեսակետը՝ հանրային իշխանության տիրույթում գտնվող առանցքային հարցերի առնչությամբ:

2. Հանրային հավաքի անցկացման մասին իրազեկելը հավաք անցկացնելու մտադրության մասին ծանուցում է և ոչ թույլտվության հայտ: Այս համատեքստում ոստիկանության և ազգային անվտանգության մարմինները չպետք է սահմանափակվեն միայն իրազեկման մեջ արտացոլված հնարավոր վտանգների կամ առնվազն խոչընդոտների շրջանակով, այլ հավուր պատշաճի բացահայտեն դրանց իրական շրջանակները և պարտավոր լինեն ողջամտության սահմաններում հրապարակայնացնելու բացասական դիրքորոշման իրենց հիմնավորումները: Այդպիսի վերապահումը հնարավո-

ություն կտա տեղական ինքնակառավարման մարմիններին կայացնելու առավել հիմնավորված և անաչառ որոշումներ:

3. Հավաքների տարատեսակությունը երաշխիք է քաղաքացիների կողմից քաղաքական որոշումների կայացմանը մասնակցելու անուղղակի նախաձեռնությունները իրացնելու, ինչպես նաև իշխանության մարմինների կողմից իշխանության սկզբնաղբյուրին հաշվետու լինելու գաղափարը կենսագործելու համար: Ուստի ինքնաբուխ և հակադարձ ուղղվածության հավաքների իրավական հիմքերի բարելավմանն ուղղված օրենսդրությունը նպատահարմար է կատարելագործել՝ մեկտեղելով հավաքի մասնակցի և հավաքը ապահովողող սուբյեկտների փոխգործակցությունը, առանցքային դիտարկելով սոցիալ-քաղաքական երևույթներին արձագանքելու եղանակը:

4. Հավաքների ազատության լիարժեք իրացումն ապահովող սահմանադրաիրավական կառուցակարգն իրենից ներկայացնում է մի համակարգ, որն արտահայտում է սեփական իրավունքները իրացնող սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների ակտիվ իրավաչափ վարքագիծը, դրա ապահովմանն ուղղված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, հավաքների ազատությունը իրացնելու և պաշտպանելու իրավաբանական երաշխիքներն ու սահմանադրորեն թույլատրելի սահմանափակումները: Այս համատեքստում, նպատակահարմար է առավել ընդգծված դիտարկել հանրային իշխանության դերակատարության առաջնահերթությունը, որն ունի երկակի դրսևորում՝ խաղաղ հավաքների ակտիվ պաշտպանության պոզիտիվ պարտականություն և պետության կողմից հավաքի բնականոն ու խաղաղ ընթացքի ապահովում:

5. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի «ճակատագիրը» հեռանկարային զարգացման հաջորդիվ շրջափուլերում կարող է հստակ արտահայտվել միայն այն դեպքում, երբ իրական ճանաչվեն պետության և քաղաքացիական հասարակության քաղաքակիրթ փոխազդեցությունը, ինչն էլ ենթադրում է հետագայում կատարելագործել հասարակական նախաձեռնությունների մեխանիզմը՝ միմյանց (պետություն և քաղաքացիական հասարակություն) վստահելու մակարդակի բարձրացմամբ, հավաքների ազատության իրավունքի կարգավորման վերաբերյալ որոշումներ կայացնող

պատասխանատու մարմնի իրավական կարգավիճակի ամրագրմամբ և գործառույթների հստակ սահմանմամբ: Խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման խնդիրը լուծելու համար կարևորում ենք նաև պատշաճ քննության իրականացումը, որի արդյունքում որոշում կընդունվի կասեցնել, ոչ թե դադարեցնել հավաքը:

6. Հավաքի կազմակերպման և անցկացման բուն ընթացակարգում (իրազեկումը, հավաքի սկիզբը և ավարտը, ընդհուպ՝ հավաքը դադարեցնելը կամ ցրելը) առանձնակի կարևորվում է հավաքի կազմակերպչի (ղեկավար) դերակատարությունը, ինչպես նաև վերջինիս պատասխանատվության որոշակիացմանը վերաբերող դրույթի ներդնումը, ինչը կարող է հնարավորություն ընձեռնել կատարելագործելու հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման որակը:

7. Հավաքների ազատության իրավունքի սահմանափակումն իրականացվում է, երբ անհրաժեշտ է լինում հավասարակշռել սահմանադրական իրավունքների հիմքում ընկած շահերը՝ կիրառելով համաչափության և որոշակիության սկզբունքները: Հավաքների ազատության իրավունքի արդյունավետության ապահովման տեսանկյունից քաղաքական զսպվածության ցուցաբերման և առանց համազգեստի հավաքների մասնակցելու հետ կապված իրավական անորոշության խնդիրը հնարավոր է վերացնել իրավաստեղծ գործունեության և իրավաբանական տեխնիկայի կատարելագործման միջոցով, ինչն էլ իր հերթին հնարավորություն կընձեռնի իրավունքների և ազատությունների կրողներին և հասցեատերերին ի վիճակի լինել դրսևորելու համապատասխան վարքագիծ:

8. Իրավապահ մարմինների գործունեության ընթացքում իրավական արժեքներից որևէ մեկին նախապատվություն տալիս՝ որպես չափանիշ պետք է ընդունել ոչ միայն իրավունքը կամ ազատությունը, այլև այն, թե դրա իրացման արդյունքում ինչ չափով է խոցելի դառնում մրցակցության մեջ գտնվող իրավունքը: Միաժամանակ, հարկ է գնահատել, թե տվյալ իրավիճակում որքանով է օբյեկտիվորեն անհրաժեշտ վիճարկվող իրավունքի իրացումը. այն կարող է համարվել խիստ արժեքավոր, բայց կոնկրետ իրավիճակում կարող է գնահատվել, որ բացակայում է դրա իրացման այնպիսի խիստ անհրաժեշտություն, որի հաշվառմամբ հարկ լինի թույլատրելի

դիտարկել այլոց որոշ իրավունքների ոչ էական խախտումները: Մարդու այլ իրավունքների պաշտպանության նպատակով հավաքների ազատության սահմանափակումը անհրաժեշտ է քննարկել միայն այն դեպքում, երբ այդ նպատակին հասնելը, ինքնին, բավարար է հիմնավորելու պետության միջամտությունը: Այն չպետք է օգտագործվի որպես կամայական կամ անորոշ սահմանափակումներ կիրառելու պատրվակ, այլ կարող է գործադրվել համարժեք երաշխիքների և չարաշահման դեմ արդյունավետ միջոցների համադրմամբ:

9. Հանրային միջոցառումների հուզական-զգացմունքային բաղադրիչը մի կողմից թույլ չի տալիս հավաքին վերաճել առավել ծայրահեղ դրսևորման (զանգվածային անկարգություններ, հեղափոխություններ, զինված ապստամբություններ և այլն)՝ երաշխավորելով անհամաձայնության և դժգոհության նվազեցումը, մյուս կողմից էլ պատճառ է հանդիսանում, որ հավաքների ազատությունը ոչ մի իրավասության շրջանակում չդիտարկվի բացարձակ: Դա է պատճառը, որ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման խնդիրը լուծելու համար նպատակահարմար է դիտարկել իրավական մշակույթի զարգացման առանցքային դերակատարությունը հանրային հավաքներ անցկացնելու քաղաքական իրավունքի իրացման մեխանիզմում:

10. Երկխոսության հայեցակարգի զարգացումը կարող է մեծապես նպաստել հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե այն դիտարկենք բանակցային ոստիկանության ստեղծման համատեքստում: Բանակցությունները կարող են էապես նպաստել լարված, բախումնային իրավիճակների հարթման գործընթացին և նվազեցնել ոստիկանության կողմից ուժի կիրառման անհրաժեշտությունը: Միաժամանակ, բանակցությունները կարող են նաև օժանդակել հանրային հավաքի ընթացքում ոստիկանական ծառայությունների մատուցման որակի բարելավմանը, դրանով իսկ՝ ոստիկանության ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Հավաքների ազատության օրենսդրական իրացման և պաշտպանության արդի հարցադրումները» Регион и мир Երևան, 2018, №4, 76-81 էջեր:

2. «Հավաքների ազատության իրավունքը հիմնարար այլ իրավունքների իրացման համատեքստում» Регион и мир Երևան, 2019, №4, 54-61 էջեր:

3. «Հավաքների ազատության իրավունքի իրացումը մասնավոր սեփականություն հանդիսացող հանրային տարածքներում» Օրենքի պատվար Երևան, 2019, №08 52-61 էջեր:

4. «Հանրային իշխանությունը՝ որպես հավաքների ազատության երաշխավոր» Регион и мир Երևան, 2020, №4, 16-20 էջեր:

5. «Հավաքի կազմակերպչի պատասխանատվության հիմնահարցերը» Օրենքի պատվար Երևան, 2020, №09, 186-195 էջեր:

6. «Իրավական մշակույթը հավաքների ազատության իրավունքի իրացման համատեքստում» Օրենքի պատվար Երևան, 2021, №12, 51-59 էջեր:

7. «Հավաքների ազատության իրավունքն այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության համատեքստում» Իրավունքի արդի հիմնախնդիրները Երևան, 2023, 202-210 էջեր:

Сафарян Амаля Гагиковна
Актуальные вопросы реализации конституционных основ свободы собраний

В процессах становления и развития демократического государства и гражданского общества роль свободы собраний крайне важна. Это дает возможность не только формировать коллективное мышление и плюрализм мнений, но и выявлять политические позиции определенных слоев общества, и в соответствии с ними эффективно участвовать в осуществлении публичной власти.

В этом контексте существуют определенные проблемы двойственного проявления роли публичной власти в конституционно-правовой системе, обеспечивающей полную реализацию свободы собраний, определением ограничения на обнародование обоснований негативной позиции полиции и органов национальной безопасности в отношении проведения собраний, совершенствованием законодательства о правовых основах спонтанных собраний, с обеспечением баланса интересов, лежащих в основе конституционных прав, необходимости ограничения права на свободу собраний с применением принципов соразмерности и определенности, и выявлением уязвимости права в условиях конкуренции.

Изучение как правоприменительной практики, так и правотворческой деятельности показывает, что при отсутствии комплексных правовых подходов невозможно обеспечить единые и предсказуемые решения для реализации свободы собраний, и в этом плане еще большее беспокойство вызывает обстоятельство существования крайне противоречивых подходов. Приведенные аргументы также обуславливают актуальность исследуемой темы.

Научная новизна диссертации заключается в том, что впервые в отечественной юриспруденции вопросы, связанные с реализацией свободы собраний, становятся предметом всестороннего изучения и анализа. На основе анализа различных мнений, высказанных в теории отечественного и зарубежного законодательства, международно-правовых регулирований судебной практики, по-новому сформулированы: ответственность организатора собрания и концепция переговорной полиции. Изучены и выявлены проблемы, возникающие в ходе проявления политического нейтралитета.

В работе были предложены новые подходы и механизмы решения проблем, возникших в теории и в ходе практического применения института свободы собраний. В результате сделаны теоретические выводы и выдвинуты предложения, направленные на совершенствование законодательства.

Представленные исследования, интерпретации, заключения и предложения, сделанные на их основе, могут иметь важное значение для развития науки конституционного права. Проведенный в диссертации анализ дополняет теорию свободы собраний, а выводы и заключения, являющиеся результатом исследования, могут быть использованы для дальнейших исследований вопроса, в правотворческой деятельности для усовершенствования законодательства, устранения пробелов, недостатков и противоречий, формирования единой правоприменительной практики, свободной от противоречий, а также в дискуссиях, в учебном процессе.

Основные положения исследования отражены в опубликованных автором научных статьях, а также представлены на различных научных конференциях.

Amalya Gagik Safaryan

CONTEMPORARY ISSUES OF APPLICATION OF CONSTITUTIONAL BASES OF FREEDOM OF ASSEMBLY

Freedom of assembly figures prominently in the process of democratic state and civil society formation and development. Not only does it enable to promote collective consciousness and diversity of opinions but also to reveal the political orientations of definite spectrums of society and to involve them effectively in the imposition of public authority.

The main issues in this context are as follows: ambiguous role of public authority in the constitutional system ensuring the total application of freedom of assembly, definition of the obligation of publicizing the basics for negative attitude towards assembly by the Police and the State Security Agencies, improvement in the legislation of the legal basis of spontaneous assembly, ways of balancing the interests underlying constitutional rights by means of applying the principles of asymmetry and certainty, necessity of restricting the right to freedom of assembly and definition of the vulnerability of a given right.

The scientific novelty of the research paper is that for the first time the issues concerning the application of the right to freedom of assembly have been subject to wide-ranging study and analysis in the national law science. The essence of freedom of assembly has been revealed based on various opinions in theoretical literature, domestic and international legislation, analysis of judicial practice, the inner content of spontaneous assembly, the liability of an assembly organizer, as well as the concept of negotiation police have been newly reformulated according to the contemporary legal system. The issues as regards informing about assembly, ceasing it, demonstrating political neutrality have been examined from different perspectives.

New mechanisms and solutions to the problems arisen within the theoretical and practical application of the institute of freedom of assembly have been put forward in the research.

The theoretical value of the research comprises the complete and in-depth analysis of the institute of freedom of assembly, the separation between the limits and the bases of limitation to the right to freedom of assembly, which

makes it possible to apply the above mentioned institute in the context of legal culture.

The deductions and suggestions underlying the present study and interpretations could be of great value in the advancement of constitutional legal science. The analysis made in the research paper completes the theoretical basics of freedom of assembly, and the conclusions drawn in the research, as a result, could create favorable grounds for further study of the issue, for law-generating activity aiming at legislation improvement, for elimination of lacks and controversies, for formation of united law-abiding practice, as well as for discussions and application in the educational process.

The core principles of the research have been included in the scientific articles published by the author and have been represented in different conferences.